

«Իգի Փեյ» ՍՊԸ

Ֆինանսական հաշվետվություններ և
անկախ աուդիտորի եզրակացություն
2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

Հունիս 2025

Երևան

«Իզի Փեյ» ՍՊԸ

Տարեկան ֆինանսական հաշվետվություններ և անկախ աուդիտորի եզրակացություն

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

Բովանդակություն

3	Անկախ աուդիտորի եզրակացություն
5	Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն
6	Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
7	Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
8	Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն
9	Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների ցանկ
10	Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Ընկերության գտնվելու վայրը՝

Հայաստանի Հանրապետություն

Իրավական ձևը՝

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

Հիմնական գործունեության նկարագիրը՝

Կազմակերպության գործունեության բնույթը ներկայացված է Ծանոթագրություն 1-ում

Գործադիր Տնօրեն՝

Մհեր Գալստյան

ԱՆԿԱՆ ԱՌԻԴՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվում է «Իզի Փեյ» ՍՊԸ-ի մասնակիցներին

Եզրակացություն ֆինանսական հաշվետվությունների աուդիտի վերաբերյալ

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Իզի Փեյ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, դրամական հոսքերի և սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման էական քաղաքականությունների ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով՝ կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը 2024թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքը և դրամական հոսքերը՝ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ Հաշվապահական Հաշվառման Ստանդարտներ) համաձայն:

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի Միջազգային Ստանդարտներին (ԱՄՍ-ներին) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում:

Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի միջազգային կանոնագրքի (ներառյալ՝ Անկախության միջազգային ստանդարտները) (ՀԷՄՄԻ կանոնագիրք) և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ կիրառելի էթիկայի պահանջների, և կատարել ենք էթիկայի պահպանման մեր այլ պարտականություններն այս պահանջներին և ՀԷՄՄԻ կանոնագրքին համապատասխան:

Մենք հավատացած ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման լիազոր անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Ընկերությունը լուծարելու կամ Ընկերության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման լիազոր անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ների համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում,
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար,
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը,
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի հաշվետվությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևավորել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր հաշվետվության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը.
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացմամբ:

Ղեկավարությանը և կառավարման լիազոր անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

23 հունիս 2025թ.

«ԲԻ-ԴԻ-Օ Արմենիա» ՓԲԸ



Վահագն Սահակյան, FCCA
Տնօրեն



Դավիթ Եղիգարյան, FCCA
Աուդիտի գործընկեր

«Իգի Փեյ» ՍՊԸ

Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

		2024	2023
	Ծան.	Հազար ՀՀ դրամ	Հազար ՀՀ դրամ
Մատուցված ծառայություններից եկամուտ	5	7,251,271	7,108,760
Մատուցված ծառայություններից ծախսեր	6	(3,075,236)	(2,928,075)
Այլ եկամուտներ		143,782	100,480
Անձնակազմի գծով ծախսեր	7	(1,259,869)	(1,204,148)
Հիմնական միջոցների մաշվածություն	13	(84,068)	(92,777)
Ոչ նյութական ակտիվների և ակտիվի			
օգտագործման իրավունքի ամորտիզացիա	14, 15	(58,405)	(46,302)
Վարչական այլ ծախսեր	8	(1,452,265)	(1,285,730)
Գործառնական շահույթ		1,465,210	1,652,208
Ֆինանսական եկամուտ		318,188	279,387
Ֆինանսական ծախսեր		(12,807)	(15,675)
Արժեզրկման հակադարձումից եկամուտ		9,028	3,020
Շահույթ մինչև հարկերը		1,779,619	1,918,940
Շահութահարկի գծով ծախս	9	(352,355)	(374,177)
Տարվա շահույթ		1,427,264	1,544,763

Ֆինանսական հաշվետվությունները և կից ծանոթագրությունների ներկայացված 6-ից 33 էջերում հաստատվել են Ընկերության ղեկավարության կողմից 2025թ. հունիսի 23-ին և ստորագրվել են վերջինիս անունից:

Մհեր Գալստյան
Գործադիր Տնօրեն



Արթուր Հովհաննիսյան
Գլխավոր հաշվապահ

«Իզի Փեյ» ՍՊԸ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

		2024	2023
	Ծան.	Հազար ՀՀ դրամ	Հազար ՀՀ դրամ
ԱԿՏԻՎՆԵՐ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	10	8,885,768	9,069,319
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	11	815,602	892,048
Տրամադրված փոխառություններ	12	269,959	281,168
Հիմնական միջոցներ	13	321,216	338,602
Ակտիվի օգտագործման իրավունք	14	84,281	113,171
Ոչ նյութական ակտիվներ	15	517,482	271,288
Հետաձգված հարկային ակտիվ	9	12,883	839
Այլ ակտիվներ		26,572	15,655
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		10,933,763	10,982,090
Պարտավորություն և սեփական կապիտալ			
Պարտավորություններ			
Վճարվելիք գումարներ և կրեդիտորական պարտքեր	16	7,243,663	7,544,340
Ներգրված փոխառություններ		994,500	896,000
Ընթացիկ հարկի գծով պարտավորություններ		212,389	223,774
Վարձակալության գծով պարտավորություն	14	98,993	126,022
ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		8,549,545	8,790,136
Սեփական կապիտալ			
Կանոնադրական կապիտալ	17	692,638	627,638
Էմիսիոն եկամուտ		124,416	124,416
Կապիտալի այլ տարր		(142,251)	(142,251)
Զբաղիված շահույթ		1,709,415	1,582,151
ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ		2,384,218	2,191,954
ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ		10,933,763	10,982,090

«Իզի Փեյ» ՍՊԸ

Դրամական հոսքերի մասին հաշվետվություն
2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

	2024 Հազար ՀՀ դրամ	2023 Հազար ՀՀ դրամ
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Շահույթ մինչև հարկումը	1,779,619	1,918,940
Ճշգրտումներ		
Մաշվածության և ամորտիզացիայի մասհանումներ	142,473	139,079
Հիմնական միջոցների օտարումից վնաս	6,487	10,059
Ֆինանսական ծախսեր	12,807	15,675
Ֆինանսական եկամուտ	(318,188)	(279,387)
Փոխարժեքային տարբերությունից (օգուտ)/վնաս	5,091	(26,386)
Արժեզրկման ծախս	(9,028)	(3,022)
Գործառնական շահույթ նախքան շրջանառու կապիտալի փոփոխությունները	1,619,261	1,774,958
Դեբիտորական պարտքեր	67,210	(94,989)
Այլ ակտիվների փոփոխություն	(10,917)	(15)
Վճարվելիք գումարների և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություններ	(300,677)	1,892,944
Գործառնական գործունեությունից ստացված գուտ դրամական հոսքեր	1,374,877	3,572,898
Վճարված շահութահարկ	(375,784)	(367,258)
Ստացված տոկոսներ	318,188	215,667
Գործառնական գործունեությունից ստացված գուտ դրամական հոսքեր	1,317,281	3,421,307
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(348,878)	(262,362)
Փոխառությունների (տրամադրում)/մարում	19,033	140,354
Ներդրումային գործունեության համար օգտագործված գուտ դրամական միջոցներ	(329,845)	(122,008)
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Կանոնադրական կապիտալի ավելացում	65,000	78,962
Վճարված շահաբաժիններ	(1,300,000)	(1,579,238)
Վարձակալության գծով պարտավորությունների մարում	(39,836)	(40,142)
Փոխառությունների ստացում/(մարում)	98,500	896,000
Ֆինանսավորման գործունեության համար օգտագործված գուտ դրամական միջոցներ	(1,176,336)	(644,418)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների գուտ աճ	(188,900)	2,654,881
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(871)	786
Արժեզրկման պահուստում փոփոխությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	-	(101)
Դրամական միջոցների և դրանց համարժեքներ տարվա սկզբում	9,069,319	6,413,753
	8,879,548	9,069,319

«Իզի Փեյ» ՍՊԸ

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

	Կանոնա- դրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Կապիտալի այլ տարր	Կուտակված շահույթ	Ընդամենը
	<u>Հազար ՀՀ դրամ</u>	<u>Հազար ՀՀ դրամ</u>	<u>Հազար ՀՀ դրամ</u>	<u>Հազար ՀՀ դրամ</u>	<u>Հազար ՀՀ դրամ</u>
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2022թ.	548,676	124,416	(142,251)	1,616,626	2,147,467
Տարվա շահույթ	-	-	-	1,544,763	1,544,763
Կանոնադրական կապիտալի ավելացում	78,962	-	-	-	78,962
Շահաբաժիններ բաժնետերերին	-	-	-	(1,579,238)	(1,579,238)
Բաժնետերերին տրամադրված փոխառությունների զեղչում	-	-	-	-	-
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2023թ.	627,638	124,416	(142,251)	1,582,151	2,191,954
Մնացորդն առ 1 հունվարի 2024թ.	627,638	124,416	(142,251)	1,582,151	2,191,954
Տարվա շահույթ	-	-	-	1,427,264	1,427,264
Կանոնադրական կապիտալի ավելացում	65,000	-	-	-	65,000
Շահաբաժիններ բաժնետերերին	-	-	-	(1,300,000)	(1,300,000)
Բաժնետերերին տրամադրված փոխառությունների զեղչում	-	-	-	-	-
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2024թ.	692,638	124,416	(142,251)	1,709,415	2,384,218

«Իզի Փեյ» ՍՊԸ

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների ցանկ

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

1.	Ընդերձություններ ՄԱՍԻՆ	11
2.	ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ	12
3.	ՆՇԱՆԱԿԱԼԻ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐ և ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	13
4.	ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ - ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ	14
5.	ՄԱՏՈՒՅՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՀԱՍՈՒՅԹ	18
6.	ՄԱՏՈՒՅՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԾԱԽՍԵՐ	18
7.	ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ	18
8.	ՎԱՐՉԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ	18
9.	ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԾԱԽՍ	19
10.	ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ և ԴՐԱՆՑ ՀԱՄԱՐԺԵՔՆԵՐ	20
11.	ԱՌԵՏՐԱՅԻՆ և ԱՅԼ ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ.....	21
12.	ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ	22
13.	ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ	23
14.	ԱԿՏԻՎԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ և ՎԱՐՉԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ.....	24
15.	ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ	25
16.	ՎՃԱՐՎԵԼԻՔ ԳՈՒՄԱՐՆԵՐ և ԿՐԵԴԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ.....	26
17.	ԿԱՊԻՏԱԼ	26
18.	ԿԱՊԱԿՅՎԱԾ ԿՈՂՄԵՐԻ ՄԻՋԻ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ	27
19.	ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԱՅԼ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ	28
20.	ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄՓՈԳ ՆԿԱՐԱԳԻՐ	29
	ՀԱՎԵԼՎԱԾ Ա – ՖԶՄՍ 13 ԻՐԱԿԱՆ ԱՐԺԵՔԻ ՉԱՓՄԱՆ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐ	33

«Իզի Փեյ» ՍՊԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծառայություններ
2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

1. Ընկերության մասին

«Իզի Փեյ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (Ընկերություն) վճարահաշվարկային կազմակերպություն է, որը գրանցվել է ՀՀ պետական ռեգիստրում 2014թ.-ի հունվարի 8-ին: Ընկերությունը իր գործունեությունը սկսել է իրականացնել 2014թ.-ի նոյեմբերի 4-ից ՀՀ Կենտրոնական բանկի թիվ 17 լիցենզիայի հիման վրա:

Ընկերությունն իրականացնում է դրամական փոխանցումներ, վճարային գործարքներ և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգ ու քլիրինգ, էլեկտրոնային փողերի թողարկում և սպասարկում: 19 հուլիսի 2017թ.-ին Ընկերությանը նաև միացել են «ՎԳԼԱԿ» ՍՊԸ-ն և «ԷՍ Փեյ» ՍՊԸ-ն, որոնք հանդիսացել են ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերություններ:

Ընկերության առաքելությունն է՝

- Շուկայում մատուցել մասնագիտացված վճարահաշվարկային ծառայություններ, որոնք ուղղված են շահառուների վճարումների կատարման գործընթացն առավել դյուրին և մատչելի դարձնելուն,
- Թողարկել ժամանակակից և տեխնոլոգիապես արդիական վճարային գործիքներ,
- Իրականացնել շուկայում արդեն իսկ գործող վճարային գործիքների սպասարկումը՝ միաժամանակ միջազգային փորձի հիման վրա ընդլայնելով առկա ծառայությունների տեսականին:

Ընկերությունն իր գործունեության ընթացքում մատուցում է հետևյալ վճարահաշվարկային ծառայությունները՝

- Բանկային ծառայությունների շրջանակում իրականացվող վճարումների ընդունում
- Կոմունալ և բջջային ծառայությունների վճարումների ընդունում
- Ինտերնետային ծառայությունների վճարումների ընդունում
- Ֆինանսական կազմակերպությունների վարկերի տրամադրումների և դրանց գծով մարումների ընդունում
- Առցանց խանութներից կատարվող առևտրի դիմաց վճարումների ընդունում
- Առցանց խաղադրույքների վճարումների ընդունում
- Հարկերի, տուրքերի և այլ պետական վճարումների ընդունում
- Բժշկական հաստատությունների կողմից մատուցվող ծառայությունների վճարումների ընդունում
- Այլ վճարահաշվարկային ծառայությունների մատուցում

Ընկերության իրավաբանական հասցեն է՝ ՀՀ ք. Երևան, 0082 Իսակովի փ. 26/1: Ընկերության գործունեության հասցեն է ՀՀ, ք. Երևան, Ադոնցի փ. 8/171:

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ընկերությունն ունի 1 մասնաճյուղ և 1 սպասարկման կետ (նախորդ տարվա նույն ժամանակահատվածում՝ 4 մասնաճյուղ և 1 սպասարկման կետ) և իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի ողջ տարածքում՝ ավելի քան 4,000 վճարային տերմինալների միջոցով (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ ավելի քան 3,800 տերմինալ), ինչպես նաև էլեկտրոնային դրամապանակի միջոցով:

2024-ին Ընկերության աշխատակիցների միջին քանակը կազմել է 220 մարդ (2023թ.-ին՝ 209):

«Իգի Փեյ» ՍՊԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

Գործարար միջավայր

Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետությունում: Հետևաբար, Ընկերության գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկաները: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն ենթակա են տարբեր մեկնաբանությունների և հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական ու ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող կազմակերպությունների համար:

2022 թվականի փետրվարին Ռուսաստանի Դաշնության և Ուկրաինայի միջև ռազմական հակամարտության պատճառով մի շարք երկրներ պատժամիջոցներ սահմանեցին Ռուսաստանի Դաշնության դեմ: Հակամարտությունը շարունակական ազդում է ոչ միայն երկու երկրների տնտեսական ակտիվության վրա, այլև համաշխարհային տնտեսության վրա: Պատժամիջոցների հետևանքով աշխարհի շատ երկրներում ապրանքների գները բարձրացել են, ռեսուրսների մատակարարման միջև հաստատված կապերը խաթարվել են, ինֆլացիան նույնպես ազդում է գների վրա, և վերլուծաբանները նաև կանխատեսում են տնտեսական հետևանքներ համաշխարհային արդյունաբերության համար:

ՀՀ տնտեսական միջավայրի վրա էական ազդեցություն ունի նաև Ռուսաստանի Դաշնությունում գործարար ակտիվության մակարդակը, քանի որ Ռուսաստանի Դաշնությունից դեպի ՀՀ տեղի են ունենում դրամական միջոցների զգալի հոսքեր: Հետևաբար տարածաշրջանում պահպանվող քաղաքական լարվածությունը, միջազգային պատժամիջոցները, արժեթղթերի շուկայի անկայունությունը, սուր գնաճը և ՌԴ առջև ծառացած այլ ռիսկերը կարող են բացասական ազդեցություն ունենալ ՀՀ տնտեսության վրա:

Պատրաստման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ Հաշվապահական Հաշվառման Ստանդարտներ) պահանջներին համապատասխան:

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար որդեգրված հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները ներկայացված են Ծանոթագրություն 20-ում: Դրանք հետևողականորեն կիրառվել են ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար, եթե այլ բան նշված չէ:

Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով, որը հանդիսանում է նաև Ընկերության ֆունկցիոնալ արժույթը: Գումարային արժեքները կլորացվել են հազարներով, եթե այլ բան նշված չէ:

ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս անհրաժեշտ է կատարել հաշվապահական հաշվառման նշանակալի գնահատումներ և դատողություններ: Վերջիններիս կիրառման ոլորտները և ազդեցությունը բացահայտված են Ծանոթագրություն 3-ում:

Չափման հիմքերը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիման վրա

Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններ

Ընկերությունը 2024 թվականի հունվարի 1-ից իր տարեկան հաշվետու ժամանակաշրջանի համար առաջին անգամ կիրառել է հետևյալ ստանդարտներն ու փոփոխությունները

- Մատակարարների ֆինանսավորման պայմանավորվածություններ (ՀՀՄՄ 7-ի և ՀՀՄՄ 7-ի փոփոխություններ)
- Վարձակալության գծով պարտավորություն վաճառքի և հետադարձ վարձակալություն գործարքների դեպքում (ՀՀՄՄ 16-ի փոփոխություն)
- Պարտավորությունների դասակարգում որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ (ՀՀՄՄ 1-ի փոփոխություն)
- Կովենանտներ ունեցող ոչ ընթացիկ պարտավորություններ (ՀՀՄՄ 1-ի փոփոխություն)

Կան մի շարք ստանդարտներ, ստանդարտների փոփոխություններ և մեկնաբանություններ, որոնք թողարկվել են ՀՀՄՄ-ի կողմից, որոնք գործելու են ապագա հաշվետու ժամանակաշրջաններում: Հետևյալ փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2025 թվականի հունվարի 1-ից սկսած ժամանակաշրջանի համար:

- Փոխանակելիության բացակայություն (ՀՀՄՄ 21-ի փոփոխություն)
- Փոփոխություններ ֆինանսական գործիքների դասակարգման և չափման մեջ (ՀՀՄՄ 9-ի և ՀՀՄՄ 7-ի փոփոխություններ)
- ՀՀՄՄ հաշվապահական ստանդարտների տարեկան բարելավումներ
- Պայմանագրեր, որոնք վերաբերում են բնությունից կախված էլեկտրաէներգիայի (նախկինում էլեկտրաէներգիայի գնման պայմանագրեր) (ՀՀՄՄ 9-ի և ՀՀՄՄ 7-ի փոփոխություններ)
- ՀՀՄՄ 18 Ներկայացում և բացահայտում ֆինանսական հաշվետվություններում
- ՀՀՄՄ 19 Դուստր ընկերություններ առանց հանրային ֆինանսական հաշվետվողականության. Բացահայտումներ

Ընկերությունը ներկայումս գնահատում է այս նոր հաշվապահական ստանդարտների և փոփոխությունների ազդեցությունը: Ընկերությունը չի ակնկալում, փոփոխությունները էական ազդեցություն կունենան իր ֆինանսական հաշվետվությունների վրա:

2. Նշանակալի հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ընկերությունը կատարում է որոշ գնահատումներ և ենթադրություններ ապագա ժամանակաշրջանների վերաբերյալ: Գնահատումներն ու դատողությունները մշտապես վերանայվում են՝ հիմնվելով պատմական փորձի և այլ գործոնների վրա, ինչպես նաև ապագա իրադարձությունների վերաբերյալ ողջամիտ ակնկալիքների վրա: Այդուհանդերձ, փաստացի փորձը կարող է տարբերվել կատարված գնահատումներից և ենթադրություններից: Ստորև ներկայացված են այն գնահատումները և ենթադրությունները, որոնք պարունակում են զգալի ռիսկ, քանի որ հաջորդ ֆինանսական տարում կարող են ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների էական ճշգրտումների պատճառ հանդիսանալ:

Առևտրային դեբիտորական պարտքերի վճարունակության ակնկալվող կորուստները - ծնթ. 11

Դեբիտորական պարտքի ակնկալվող կորստի պահուստի դրույքները որոշվել են՝ հաշվի առնելով Ընկերության նախորդ տարիների պարտքային կորուստները և հաճախորդների վրա ազդող ընթացիկ և ակնկալվող մակրոտնտեսական ցուցանիշները: Առևտրային դեբիտորական պարտքերը գնահատվել են՝ որպես նմանատիպ առևտրային պարտքերին բնորոշ ռիսկայնության:

Իրական արժեքի չափում (Հավելված Ա)

Մի շարք ակտիվներ և պարտավորություններ պահանջվում է չափել իրական արժեքով և/կամ բացահայտել դրանց իրական արժեքը Ընկերության ֆինանսական հաշվետվություններում:

Ընկերության ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի չափման համար հնարավորինս օգտագործվում են շուկայական դիտելի ելակետային

«Իզի Փեյ» ՍՊԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

տվյալներ: Իրական արժեքի չափման համար օգտագործվող ելակետային տվյալները դասակարգվում են ըստ տարբեր մակարդակների՝ կախված նրանից, թե որքանով են գնահատման մեթոդի մեջ օգտագործվող տվյալները դիտելի («իրական արժեքի հիերարխիա»):

- *Մակարդակ 1. Նույնական ակտիվների կամ պարտավորությունների համար ակտիվ շուկաներում գնանշվող գներ (չձգրտված)*
- *Մակարդակ 2. Ուղղակի կամ անուղղակիորեն դիտելի ելակետային տվյալներ՝ բացառությամբ 1-ին մակարդակում ներառվող գնանշվող գներից*
- *Մակարդակ 3. Ոչ դիտելի ելակետային տվյալներ (այսինքն՝ հիմնված չեն շուկայական տվյալների վրա)*

Ակտիվների և պարտավորությունների դասակարգումը վերոնշյալ մակարդակներում հիմնվում է ամենացածր մակարդակի ելակետային տվյալների վրա, որոնք ունեն զգալի ազդեցություն իրական արժեքի չափման վրա: Տեղափոխությունը մի մակարդակից մյուսը ճանաչվում է այն ժամանակաշրջանում, որի ընթացքում այն տեղի է ունենում:

4. Ֆինանսական գործիքներ - ռիսկերի կառավարում

Իր գործունեության արդյունքում Ընկերությունը կարող է ենթարկվել հետևյալ ֆինանսական ռիսկերին՝

- Պարտքային ռիսկ
- Իրական արժեքի կամ դրամական միջոցների հոսքերի տոկոսադրույքային ռիսկ
- Արտարժույթային ռիսկ
- Իրացվելիության ռիսկ

Ընկերությունը կարող է ենթարկվել իր կողմից ֆինանսական գործիքների օգտագործումից առաջացող ռիսկերի, ինչպես բնորոշ է մյուս բոլոր ձեռնարկատիրական գործունեություններին: Սույն ծանոթագրությունում ներկայացված են Ընկերության նպատակները, քաղաքականությունը, ռիսկերի կառավարման գործընթացները և դրանց չափման մեթոդները: Սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված է քանակական տեղեկատվություն վերոնշյալ ռիսկերի վերաբերյալ:

Ֆինանսական գործիքներից առաջացող ռիսկերի, Ընկերության նպատակների, քաղաքականության, ռիսկերի կառավարման գործընթացների և դրանց չափման մեթոդների հետ կապված նախորդ ժամանակաշրջանների համեմատ էական փոփոխություններ չեն գրանցվել (եթե այլ բան սահմանված չէ):

(ա) Հիմնական ֆինանսական գործիքներ

Ընկերության հիմնական ֆինանսական գործիքները, որոնցից առաջանում են ռիսկեր, ներկայացված են ստորև.

- Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ
- Առևտրային դեբիտորական պարտքեր
- Տրամադրված փոխառություններ
- Այլ ֆինանսական ակտիվներ
- Վճարվելիք գումարներ և առևտրային կրեդիտորական պարտքեր
- Վարձակալության գծով պարտավորություններ

«Իզի Փեյ» ՍՊԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

(բ) Ֆինանսական գործիքներ ըստ խմբերի

	Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	
	31.12.2024	31.12.2023
	Հազար ՀՀ դրամ	Հազար ՀՀ դրամ
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	8,885,768	9,069,319
Դեբիտորական պարտքեր	735,140	801,836
Տրամադրված փոխառություններ	269,959	281,168
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	9,890,867	10,152,323

Ֆինանսական պարտավորություններ

	Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ	
	31.12.2024	31.12.2023
	Հազար ՀՀ դրամ	Հազար ՀՀ դրամ
Վճարվելիք գումարներ և կրեդիտորական պարտքեր	6,624,920	7,047,004
Ներգրավված փոխառություններ փոխառություն	994,500	896,000
Վարձակալության գծով պարտավորություն	98,993	126,022
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	7,718,413	8,069,026

(գ) Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ

Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքները ներառում են առևտրային դեբիտորական պարտքերը, տրամադրած փոխառությունները, դրամական միջոցները և դրանց համարժեքները, առևտրային կրեդիտորական պարտքերը և վարձակալության գծով պարտավորությունները:

Առևտրային դեբիտորական պարտքերի, տրամադրած փոխառությունների, դրամական միջոցների և դրանց համարժեքների հաշվեկշռային արժեքը մոտավորապես հավասարվում է իրական արժեքին :

Հավելված Ա-ում ներկայացված են իրական արժեքի հիերարխիայի, գնահատման մեթոդների և մանրամասներ:

Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնասների ռիսկն է՝ պայմանավորված հաճախորդի կամ ֆինանսական գործիքի կողմերի պայմանագրային պարտականությունների չկատարմամբ:

Պարտքային ռիսկն առաջանում է նաև բանկերում պահվող դրամական միջոցներից և դրանց համարժեքներից և բանկային ավանդներից: Ընկերությունն իր միջոցները հիմնականում տեղաբաշխում է հայաստանյան բանկերում:

Ընկերությունը շարունակաբար հսկում է հաճախորդների պարտքի հայտանիշները, հնարավորության դեպքում օգտագործելով նաև հաճախորդների վերաբերյալ արտաքին վարկանիշներ և/կամ հաշվետվություններ: Ընթացիկ պարտքային ռիսկը կառավարվում է պարբերական ժամկետային վերլուծություններ կատարելու միջոցով՝ համատեղելով յուրաքանչյուր հաճախորդի համար կրեդիտորական պարտքի սահմանաչափի որոշմամբ:

Ընկերությունը բոլոր դեբիտորական պարտքերի համար կիրառում է ՖՀՄՍ 9-ի պարզեցված մոդելը. «գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների ճանաչում», քանի որ այս դեբիտորները չեն պարունակում էական ֆինանսավորման բաղադրիչ:

«Իզի Փեյ» ՍՊԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկն առաջանում է Ընկերության տոկոսաբեր, առևտրային և արտադրության ֆինանսական գործիքներից: Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ ապագա դրամական միջոցների հոսքերի տատանումների ռիսկն է տոկոսադրույքի (տոկոսադրույքային ռիսկ), արտադրության փոխարժեքի (արտադրության ռիսկ) կամ այլ շուկայական գործոնների (այլ շուկայական գործոնների ռիսկ) հետևանքով:

Իրական արժեքի և դրամական միջոցների հոսքերի տոկոսադրույքային ռիսկ

Ընկերությունը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ չունի փոփոխական տոկոսադրույքով վարկեր կամ փոխառություններ: Ընկերությունն ունի ներգրավված անտոկոս փոխառություն, որը չի ենթարկվում տոկոսադրույքի տատանումների ռիսկերին:

Արտադրության ռիսկ

Արտադրության ռիսկն առաջանում է, երբ Ընկերության գործարքներն արտահայտված չեն ֆունկցիոնալ արժույթով: Ընկերությունը դոլարով և ռուբլիով արտահայտված էական ակտիվներ/պարտավորություններ չունի:

Այլ արժույթով արտահայտված ակտիվները և պարտավորությունները ՀՀ դրամով արտահայտելու համար Ընկերությունը հղում է կատարում ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված փոխարժեքներին հաշվետու ամսաթվի դրությամբ: 2024թ. և 2023թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված փոխարժեքներ ներկայացված են ստորև (արտադրության մեկ միավորի արժեք արտահայտված ՀՀ դրամով).

	31.12.2024	31.12.2023
	հազ. դրամ	հազ. դրամ
1 ԱՄՆ դոլար	396.56	404.79
1 Ռուսական ռուբլի	3.71	4.50

2024թ. և 2023թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության արտադրության ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների կառուցվածքն ըստ արժույթների ներկայացված է ստորև՝

	31.12.2024		31.12.2023	
	ԱՄՆ	Ռուսական	ԱՄՆ	Ռուսական
	Դոլար	Ռուբլի	Դոլար	Ռուբլի
	Հազար ՀՀ	Հազար ՀՀ	Հազար ՀՀ	Հազար ՀՀ
	դրամ	դրամ	դրամ	դրամ
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	10,450	26,514	8,477	50,760
Դեբիտորական պարտքեր	-	38,273	14,014	19,464
Վճարվելիք գումարներ և կրեդիտորական պարտքեր	(216)	(357)	(1,956)	(433)
	<u>10,234</u>	<u>64,430</u>	<u>20,535</u>	<u>69,791</u>

Հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ դրամի նկատմամբ ԱՄՆ դոլարի 10% արժևորումը /(արժեզրկումը) այլ փոփոխականների հաստատուն մնալու պայմանով կհանգեցնի Ընկերության զուտ ակտիվների և տարվա ֆինանսական արդյունքի աճին/(նվազմանը)՝ 1,023 հազար դրամի չափով (2023թ.՝ 2,054 հազար դրամ):

Հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ դրամի նկատմամբ Ռուսական ռուբլու 10% արժևորումը /(արժեզրկումը) այլ փոփոխականների հաստատուն մնալու պայմանով կհանգեցնի Ընկերության զուտ

«Իզի Փեյ» ՍՊԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

ակտիվների և տարվա ֆինանսական արդյունքի աճին/(նվազմանը)՝ 6,443 հազար դրամի չափով (2023թ. 6,979 հազար դրամ):

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը կարող է ծագել Ընկերության գործող կապիտալի կառավարումից, ֆինանսական ծախսերից և պարտքային գործիքների հիմնական գումարների մարումներից: Իրացվելիության ռիսկը կապված է Ընկերության ֆինանսական պարտավորությունները սահմանված ժամկետներում մարելու կարողության հետ:

Համաձայն Ընկերության քաղաքականության՝ Ընկերությունը պետք է ունենա պարտավորությունների մարման համար բավարար դրամական միջոցներ: Այս ուղղությամբ Ընկերությունը մշտապես իրականացնում է միջոցների կառավարման գործընթաց՝ նպատակ ունենալով ապահովել իրացվելիության բավարար մակարդակ՝ ֆինանսական կայունության և կանխատեսելիության համար: :

Ստորև ներկայացված են Ընկերության ֆինանսական պարտավորությունների (չգեղջված պայմանագրային դրամական միջոցների հոսքեր) մարման պայմանագրային ժամկետները:

Առ 31-ը դեկտեմբերի 2024թ.	Մինչև 3 ամիս Հազար ՀՀ դրամ	3-ից 12 ամիս Հազար ՀՀ դրամ	1-ից 2 տարի Հազար ՀՀ դրամ	2-ից 5 տարի Հազար ՀՀ դրամ
Վճարվելիք գումարներ և կրեդիտորական պարտքեր	6,624,920	-	-	-
Ներգրավված փոխառություններ փոխառություն	-	994,500	-	-
Վարձակալության գծով պարտավորություն	9,961	29,884	39,846	36,525
Ընդամենը	6,634,881	1,024,384	39,846	36,525
Առ 31-ը դեկտեմբերի 2023թ.	Մինչև 3 ամիս Հազար ՀՀ դրամ	3-ից 12 ամիս Հազար ՀՀ դրամ	1-ից 2 տարի Հազար ՀՀ դրամ	2-ից 5 տարի Հազար ՀՀ դրամ
Վճարվելիք գումարներ և կրեդիտորական պարտքեր	7,047,004	-	-	-
Ներգրավված փոխառություններ փոխառություն	-	896,000	-	-
Վարձակալության գծով պարտավորություն	9,961	29,884	39,846	76,371
Ընդամենը	7,056,965	925,884	39,846	76,371

Կապիտալի կառավարում

Ընկերությունը իր կապիտալը կառավարում է՝ ապահովելու համար Ընկերության շարունակական գործունեությունը և բաժնետիրոջ շահույթը:

Ընկերության կապիտալի կառուցվածքը ներառում է փոխառու միջոցները (ընթացիկ և ոչ ընթացիկ պարտավորություններ) և սեփական կապիտալը (ներառող կանոնադրական կապիտալը, պահուստները, լրացուցիչ կապիտալը և կուտակված շահույթը):

Ընկերության՝ որպես կապիտալ կառավարվող գումարները հաշվետու տարվա համար ամփոփված են ստորև.

«Իզի Փեյ» ՍՊԸ

**Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)**

	31.12.2024	31.12.2023
	Հազար ՀՀ դրամ	Հազար ՀՀ դրամ
Փոխառություններ/վարկեր	(994,500)	(896,000)
Հանած՝ մնացորդներ դրամարկղում և բանկերում	8,885,768	9,069,319
Զուտ դրամական միջոցներ	7,891,268	(8,173,319)
Ընդհանուր սեփական կապիտալ	2,384,281	2,191,954

5. Մատուցված ծառայություններից հասույթ

	2024	2023
	Հազար ՀՀ դրամ	Հազար ՀՀ դրամ
Միջնորդավճարներ վճարումների ընդունման ծառայություններից	6,903,624	6,761,177
Գործակալների տերմինալների սպասարկման ծառայություններից	347,647	347,583
	7,251,271	7,108,760

Ծառայությունները մատուցվել են և եկամուտը ստացվել է ՀՀ տարածքում: Հասույթը ճանաչվում է ծառայության մատուցման պահին:

6. Մատուցված ծառայություններից ծախսեր

	2024	2023
	Հազար ՀՀ դրամ	Հազար ՀՀ դրամ
Միջնորդավճարներ գործակալներին	2,892,926	2,802,688
Հաշվարկային գործառնություններ/փոխանցումներ	182,310	125,387
	3,075,236	2,928,075

7. Անձնակազմի գծով ծախսեր

	2024	2023
	Հազար ՀՀ դրամ	Հազար ՀՀ դրամ
Հատուցումներ աշխատակիցներին	1,123,434	1,059,139
Պարգևավճարներ	136,435	145,009
	1,259,869	1,204,148

8. Վարչական ծախսեր

	2024	2023
	Հազար ՀՀ դրամ	Հազար ՀՀ դրամ
Տերմինալների պահատվության ծախսեր	507,396	469,042
Մարքեթինգ և գովազդ	335,218	229,439
Ինկասացիոն ծախսեր	219,933	191,946
Ծրագրերի և հիմնական միջոցների սպասարկման ծախսեր	121,104	169,079
Աշխատակիցների հետ կապված այլ ծախսեր	49,714	42,192
Հարկեր	19,961	36,405
Գրասենյակային և կոմունալ	30,752	30,496
Աուդիտորական և խորհրդատվական	22,808	22,444
Փոքրարժեք ակտիվների վարձակալության ծախսեր	22,668	21,958
Վարչական այլ	122,711	72,729
	1,452,265	1,285,730

«Իգի Փեյ» ՍՊԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

9. Շահութահարկի գծով ծախս

Հայաստանի Հանրապետությունում շահութահարկի դրույքաչափը 18% է (2023թ.՝ 18%):

	2024	2023
	Հազար ՀՀ դրամ	Հազար ՀՀ դրամ
Ընթացիկ հարկի գծով ծախս	364,399	368,962
Նախորդ ժամանակահատվածների շահութահարկերի ճշգրտում	-	5,911
Ժամանակավոր տարբերությունների գծով հարկային ծախս	(12,044)	(696)
	352,355	374,177

Արդյունավետ տոկոսադրույքի համադրում

	2024		2023	
	Հազար ՀՀ դրամ	Արդյունավետ հարկային դրույքաչափ %	Հազար ՀՀ դրամ	Արդյունավետ հարկային դրույքաչափ %
Շահույթ հարկումից առաջ	1,779,618		1,918,940	
Շահութահարկ (18%)	320,331	18%	345,409	18%
Հարկային նպատակով չնվազեցվող ծախսեր, գուտ	32,024	3%	28,768	1%
Ժամանակաշրջանի շահութահարկի գծով ծախս	352,355	21%	374,177	19%

Հետաձգված հարկային պարտավորությունների, շահույթում կամ վնասում ճանաչված գումարների և այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված գումարների մանրամասները ներկայացված են ստորև.

Հազար ՀՀ դրամ	2023թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ	(Հաշվեգրված)/ նվազեցված շահույթի կամ վնասի հաշվին	2024թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	51	6	58
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	548	121	669
Տրամադրված փոխառություններ	2,390	(1,408)	982
Հիմնական միջոցներ	(20,100)	3,149	(16,951)
Ակտիվի օգտագործման իրավունք	(20,371)	5,200	(15,171)
Վարձակալության գծով պարտավորություն	22,684	(4,865)	17,819
Այլ պարտավորություններ	15,637	9,841	25,477
	839	12,044	12,883

«Իզի Փեյ» ՍՊԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ	2022թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ	(Հաշվեգրված)/ նվազեցված շահույթի կամ վնասի հաշվին	2023թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	33	18	51
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	1,228	(680)	548
Տրամադրված փոխառություններ	2,340	50	2,390
Հիմնական միջոցներ	(19,593)	(507)	(20,100)
Ակտիվի օգտագործման իրավունք	(25,572)	5,201	(20,371)
Վարձակալության գծով պարտավորություն	27,088	(4,404)	22,684
Այլ պարտավորություններ	14,619	1,018	15,637
	143	696	839

10. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

	31.12.2024 Հազար ՀՀ դրամ	31.12.2023 Հազար ՀՀ դրամ
Կանխիկ դրամական միջոցներ ՀՀ դրամով	2,163,257	1,791,190
Կանխիկ դրամական միջոցներ արտարժույթով	154	171
Հաշիվներ բանկերում ՀՀ դրամով	3,838,089	3,776,270
Հաշիվներ բանկերում և այլ վճարային ծառայություններ մատուցող կազմակերպությունում արտարժույթով	34,907	57,124
Դրամական միջոցներ Տերմինալում	1,887,663	1,888,719
Դրամական միջոցներ Ճանապարհին	961,986	1,556,133
	8,886,056	9,069,607
Ակնկալվող պարտքային կորուստների համար պահուստ	(288)	(288)
Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	8,885,768	9,069,319

Հաշիվներում, այդ թվում՝ քաղաքացիական օրենսգրքով սահմանված հատուկ օգտագործման սահմանափակված բանկային հաշիվներում առկա միջոցների մնացորդը պահպանվում է կայուն մակարդակում: Նշված հաշիվների գործառնությունները և օգտագործումը վերահսկվում են Կենտրոնական բանկի պահանջներով՝ հավաքագրված միջոցների նպատակային օգտագործումը ապահովելու նպատակով:

Դրամական միջոցների և դրանց համարժեքների գծով արժեզրկման պահուստի շարժը հետևյալն է՝

	31/12/2024 Հազար ՀՀ դրամ	31/12/2023 Հազար ՀՀ դրամ
Պահուստ հունվարի 1-ի դրությամբ	288	186
Կորուստների գծով պահուստի զուտ վերաչափում	-	102
Դուրս գրում	-	-
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	288	288

«Իզի Փեյ» ՍՊԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

Ընկերության դրամական միջոցները տեղաբաշխված են ՀՀ բանկերում, մանրամասները ներկայացված են ստորև աղյուսակում՝

	31.12.2024	31.12.2023
	Հազար ՀՀ դրամ	Հազար ՀՀ դրամ
[Հաստատություն 1]	1,918,812	808,832
[Հաստատություն 2]	729,902	1,902,819
[Հաստատություն 3]	624,365	422,042
[Հաստատություն 4]	167,179	67,793
[Հաստատություն 5]	130,480	119,365
[Հաստատություն 6]	103,900	133,580
[Հաստատություն 7]	91,003	102,515
[Հաստատություն 8]	29,010	170,605
[Հաստատություն 9]	26,545	12,052
[Հաստատություն 10]	17,354	-
[Հաստատություն 11]	11,317	72,192
Այլ	23,129	21,599
	3,872,996	3,833,394

Տերմինալներում գտնվող դրամական միջոցները 31 դեկտեմբերի դրությամբ Ընկերության վերահսկողության տակ գտնվող տերմինալներից չհավաքագրված միջոցների մնացորդն է:

Ճանապարհին դրամական միջոցները Ընկերության աշխատակից ինկասատորի, այլ ինկասացիոն կազմակերպությունների և գործակալների կողմից տերմինալներից ինկասացված և բանկային հաշիվներ մուտքագրած գումարն է, որ դեռևս չի հաստատվել բանկերի կողմից:

Ընկերությունը բանկերից մեկում ունի դրամական միջոցների հոսքերի գրավ 60 մլն սահմանաչափով:

2024թ. -ի վերջի դրությամբ Ընկերությունը չունի օգտագործված օվերդրաֆտի կամ վարկի մնացորդ:

11. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

	31.12.2024	31.12.2023
	Հազար ՀՀ դրամ	Հազար ՀՀ դրամ
Պարտքեր հավաքագրված գումարների գծով երրորդ կողմից	408,351	514,421
Դեբիտորական պարտքեր մատուցած ծառայությունների դիմաց	171,174	175,721
Այլ դեբիտորական պարտքեր	157,828	115,111
Անհավաքագրելիության գծով պահուստ	(2,213)	(3,417)
Ընդամենը ամորտիզացված արժեքով չափով ֆինանսական ակտիվներ	735,140	801,836
Տրված կանխավճարներ	75,752	86,155
Կանխավճարներ բյուջեի նկատմամբ	4,024	3,588
Այլ դեբիտորական պարտքեր	686	469
	815,602	892,048

Հավաքագրված գումարների գծով այլ անձանցից պարտքերը Ընկերության հաճախորդների կողմից տերմինալների և էլեկտրոնային դրամապանակների միջոցով կատարած վճարումներն են, որոնք Ընկերությանը փոխանցվում են 1 ամսվա ընթացքում:

Վերը ներկայացված պահուստի գումարը հաշվարկված է ՖՀՄՍ 9-ի ակնկալվող կորուստների պարզեցված մոդելի հիման վրա:

«Իգի Փեյ» ՍՊԸ

**Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)**

	2024	2023
	<u>Հազար ՀՀ դրամ</u>	<u>Հազար ՀՀ դրամ</u>
Պահուստ հունվարի 1-ի դրությամբ	3,416	6,820
Կորուստների գծով պահուստի զուտ վերաչափում	(1,204)	(3,404)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	<u>2,213</u>	<u>3,416</u>

12. Տրամադրված փոխառություններ

	31.12.2024	31.12.2023
	<u>Հազար ՀՀ դրամ</u>	<u>Հազար ՀՀ դրամ</u>
Տրամադրված փոխառություններ Ընկերության մասնակիցներին	267,415	286,448
Այլ անձանց	8,000	8,000
Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստ	(5,456)	(13,280)
Ընդամենը տրամադրված փոխառություններ	<u>269,959</u>	<u>281,168</u>

Հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերության բոլոր տրամադրված փոխառությունները ունեն մինչև մեկ տարվա մարման ժամկետ և դասակարգվում են որպես ընթացիկ:

Փոխառությունների գծով արժեզրկման պահուստի շարժը հետևյալն է՝

	2024	2023
	<u>Հազար ՀՀ դրամ</u>	<u>Հազար ՀՀ դրամ</u>
Պահուստ հունվարի 1-ի դրությամբ	13,280	13,000
Կորուստների գծով պահուստի զուտ վերաչափում	(7,824)	280
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	<u>5,456</u>	<u>13,280</u>

«Իզի Փեյ» ՍՊԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

13. Հիմնական միջոցներ

	Տրանսպորտային միջոցներ	Մեքենա սարքավորումներ	Կապիտալ վերանորոգումներ վարձակալված հիմնական միջոցներում	Այլ հիմնական միջոցներ	Ընդամենը
<i>Սկզբնական արժեք կամ վերագնահատված արժեք</i>					
Առ 01 հունվար 2023թ.	5,890	1,153,309	21,906	42,552	1,223,657
Ավելացումներ	-	57,103	6,984	4,109	68,196
Նվազեցումներ	-	(37,130)	-	(381)	(37,511)
Վերադասակարգումներ	(2,945)	2,972	-	(27)	-
Առ 31 դեկտեմբեր 2023թ.	2,945	1,176,254	28,890	46,253	1,254,342
<i>Սկզբնական արժեք կամ վերագնահատված արժեք</i>					
Առ 01 հունվար 2024թ.	2,945	1,176,254	28,890	46,253	1,254,342
Ավելացումներ	-	72,028	169	973	73,170
Նվազեցումներ	-	(27,242)	-	(432)	(27,674)
Վերադասակարգումներ	-	502	-	(502)	-
Առ 31 դեկտեմբեր 2024թ.	2,945	1,221,542	29,059	46,292	1,299,838
<i>Կուտակված մաշվածություն, վերագնահատման ազդեցություն, արժեզրկումից կորուստներ</i>					
Առ 01 հունվար 2023թ.	4,244	819,873	2,657	23,706	850,480
Ավելացումներ	-	84,319	1,397	7,061	92,777
Նվազեցումներ	-	(27,149)	-	(368)	(27,517)
Վերադասակարգումներ	(1,299)	1,346	-	(47)	-
Առ 31 դեկտեմբեր 2023թ.	2,945	878,389	4,054	30,352	915,740
<i>Կուտակված մաշվածություն, վերագնահատման ազդեցություն, արժեզրկումից կորուստներ</i>					
Առ 01 հունվար 2024թ.	2,945	878,389	4,054	30,352	915,740
Ավելացումներ	-	74,618	5,035	4,415	84,068
Նվազեցումներ	-	(20,866)	-	(320)	(21,186)
Վերադասակարգումներ	-	179	-	(179)	-
Առ 31 դեկտեմբեր 2024թ.	2,945	932,320	9,089	34,268	978,622
<i>Զուտ հաշվեկշռային արժեք</i>					
Առ 01 հունվար 2023թ.	1,646	333,436	19,249	18,846	373,177
Առ 31 դեկտեմբեր 2023թ.	-	297,865	24,836	15,901	338,602
Առ 31 դեկտեմբեր 2024թ.	-	289,221	19,970	12,025	321,216

«Իզի Փեյ» ՍՊԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ընկերությունում լրիվ մաշված հիմնական միջոցների արժեքը 671,226 դրամ է (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 621,376 հազար դրամ է):
 Լրիվ մաշված հիմնական միջոցների 97%-ը բաժին է ընկնում մեքենա սարքավորումներին:

14. Ակտիվի օգտագործման իրավունք և վարձակալության գծով պարտավորություն

	Գրասենյակային տարածք Հազար ՀՀ դրամ
Մնացորդը առ 1 հունվար 2023թ.	142,065
Ամորտիզացիա	(28,894)
Մնացորդը առ 31 դեկտեմբեր 2023թ.	113,171
Մնացորդն առ 01 հունվար 2024	113,171
Ամորտիզացիա	(28,890)
Մնացորդը առ 31 դեկտեմբեր 2024թ.	84,281
Վարձակալության գծով պարտավորություն	
Մնացորդը առ 1 հունվար 2023թ.	150,489
Ֆինանսական ծախս	15,675
Վարձակալական վճարներ	(40,142)
Մնացորդը առ 31 դեկտեմբեր 2023թ.	126,022
Մնացորդն առ 01 հունվար 2024	126,022
Ֆինանսական ծախս	12,807
Վարձակալական վճարներ	(39,836)
Մնացորդը առ 31 դեկտեմբեր 2024թ.	98,993

Ֆինանսական գործունեությունից առաջացող պարտավորությունների համադրում

Ընկերության պարտավորություններում, ֆինանսավորման գործունեությունից առաջացող փոփոխությունները ներկայացված են ստորև

	Ներգրավված փոխառություններ Հազար ՀՀ դրամ	Վարձակալության գծով պարտավորություններ Հազար ՀՀ դրամ	Ընդամենը Հազար ՀՀ դրամ
Մնացորդն առ 31 դեկտեմբեր 2022	-	150,489	150,489
<i>Դրամային հոսքերից</i>			
Մարված գումար	-	(40,142)	(40,142)
Ստացված գումար	896,000	-	896,000
<i>Ոչ դրամային հոսքերից</i>			-
Հաշվեգրած տոկոս	-	15,675	15,675
Մնացորդն առ 31 դեկտեմբեր 2023	896,000	126,022	1,022,022
<i>Դրամային հոսքերից</i>			
Մարված գումար	(896,000)	(39,836)	(935,836)
Ստացված գումար	994,500	-	994,500
<i>Ոչ դրամային հոսքերից</i>			-
Հաշվեգրած տոկոս	-	12,807	12,807
Մնացորդն առ 31 դեկտեմբեր 2024	994,500	98,993	1,093,493

«Իզի Փեյ» ՍՊԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

15. Ոչ նյութական ակտիվներ

Հազար ՀՀ դրամ	Համակարգչային	Լիցենզիաներ և	Այլ	Մշակման փուլում գտնվող	Ընդամենը
<i>Մկրբնական արժեք կամ վերագնահատված արժեք</i>					
Առ 01 հունվար 2023թ.	37,600	34,525	1,900	48,000	122,025
Ավելացումներ	14,501	14,387	1,638	163,640	194,166
Նվազեցումներ	-	(1,217)	-	-	(1,217)
Վերադասակարգումներ	(1,100)	-	-	1,100	-
Առ 31 դեկտեմբեր 2023թ.	51,001	47,695	3,538	212,740	314,974
<i>Մկրբնական արժեք կամ վերագնահատված արժեք</i>					
Առ 01 հունվար 2024թ.	51,001	47,695	3,538	212,740	314,974
Ավելացումներ	-	5,948	12,600	257,160	275,708
Նվազեցումներ	(360)	(2,511)	-	-	(2,871)
Վերադասակարգումներ	6,109	-	1651.2	(7,760)	0
Առ 31 դեկտեմբեր 2024թ.	56,750	51,132	17,789	462,140	587,811
<i>Կուտակված մաշվածություն, վերագնահատման ազդեցություն, արժեզրկումից կորուստներ</i>					
Առ 01 հունվար 2023թ.	13,095	13,796	539	-	27,430
Ավելացումներ	7,746	9,390	272	-	17,408
Նվազեցումներ	(98)	(1,054)	-	-	(1,152)
Առ 31 դեկտեմբեր 2023թ.	20,743	22,132	811	-	43,686
<i>Կուտակված մաշվածություն, վերագնահատման ազդեցություն, արժեզրկումից կորուստներ</i>					
Առ 01 հունվար 2024թ.	20,743	22,132	811	-	43,686
Ավելացումներ	7,895	20,041	1,579	-	29,515
Նվազեցումներ	(361)	(2,511)	-	-	(2,872)
վերադասակարգումներ	(110)	-	110	-	-
Առ 31 դեկտեմբեր 2024թ.	28,167	39,662	2,500	-	70,329
<i>Ջուտ հաշվեկշռային արժեք</i>					
Առ 01 հունվար 2023թ.	24,505	20,729	1,361	48,000	94,595
Առ 31 դեկտեմբեր 2023թ.	30,258	25,563	2,727	212,740	271,288
Առ 31 դեկտեմբեր 2024թ.	28,583	11,470	15,289	462,140	517,482

«Իզի Փեյ» ՍՊԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

16. Վճարվելիք գումարներ և կրեդիտորական պարտքեր

	31.12.2024	31.12.2023
	Հազար ՀՀ դրամ	Հազար ՀՀ դրամ
Կրեդիտորական պարտքեր հավաքագրած գումարների գծով	6,046,307	6,392,006
Հաշվարկային գործառնություններ իրականացնող և ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	5,375,114	5,599,966
Կոմունալ ծառայություններ մատուցող կազմակերպություններ նկատմամբ	230,942	306,808
Պետական և տեղական բյուջեի հետ հաշիվների նկատմամբ	208,650	252,790
Այլ կազմակերպությունների նկատմամբ	231,601	232,442
Գործակալներին վճարվելիք գումարներ	244,286	257,658
Կրեդիտորական պարտքեր ստացված ծառայությունների գծով	48,793	102,143
Այլ կրեդիտորական պարտքեր	285,534	295,197
Ֆինանսական պարտավորություններ	6,624,920	7,047,004
Ստացված կանխավճարներ	81,194	16,852
Պարտքեր Բյուջեի նկատմամբ	54,941	59,413
Կրեդիտորական պարտքեր աշխատակիցների նկատմամբ	145,208	81,953
Գործակալներից ստացված դեպոզիտային գումարներ	271,987	274,215
Էլեկտրոնային դրամապանակ	65,413	64,903
	7,243,663	7,544,340

Վճարվելիք գումարները գործընկերների մատուցած ծառայությունների դիմաց հավաքագրած գումարներն են, որոնք դեկտեմբերի 31-ի դրությամբ դեռևս չեն փոխանցվել:

Ընկերության վերահսկողությունից դուրս գտնվող տերմինալներում գործընկերների պարտավորությունների դիմաց վճարումների ապահովության նպատակով, Ընկերությունը գործակալներից ներգրավում է դեպոզիտային գումարներ և բանկային երաշխիքներ՝ տերմինալներում հավաքագրվելիք գումարների առավելագույն սահմանաչափով:

17. Կապիտալ

Ընկերության կանոնադրական կապիտալը ըստ մասնակիցների ներկայացված է ստորև՝

	31 դեկտեմբեր 2024թ.		31 դեկտեմբեր 2023թ.	
Հազար ՀՀ դրամ	Վճարված կանոնադրական կապիտալ	Բաժնեմասը վճարված կապիտալում	Վճարված կանոնադրական կապիտալ	Բաժնեմասը վճարված կապիտալում
Կարինե Փաշինյան	588,742	85%	533,492	85%
Նարինե Նազարյան	103,896	15%	94,146	15%
Ընդամենը կանոնադրական կապիտալ	692,638	100%	627,638	100%

Ընկերության կանոնադրական կապիտալը 2024թ. -ին համալրվել է 65,000 հազար ՀՀ դրամով, 2023թ. -ին 78,962 հազար ՀՀ դրամ:

«Իգի Փեյ» ՍՊԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

Բաշխման ենթակա Ընկերության պահուստները սահմանափակվում են կուտակված շահույթով:

2024թ. հայտարարվել և վճարվել է 1,300,000 հազար ՀՀ դրամ շահաբաժին (2023թ.՝ 1,579,238 հազար ՀՀ դրամ):

Կապիտալի այլ տարրը առաջացել է բաժնետիրոջը տրամադրված երկարաժամկետ փոխառության շուկայական տոկոսադրույքով զեղչման արդյունքում:

18. Կապակցված կողմերի միջև գործարքներ

Ընկերության կապակցված կողմերը ներառում են Ընկերության մասնակիցներին և հիմնական ղեկավար անձնակազմը:

Ընկերությունն իր գործունեության ընթացքում ներգրավված է լինում կապակցված կողմերի հետ մի շարք գործարքներում:

	31/12/2024	31/12/2023
	Հազար ՀՀ դրամ	Հազար ՀՀ դրամ
Տրամադրված փոխառություններ ընկերության մասնակիցներին (Ծան. 12)	267,415	286,448
Անհավաքագրելիության պահուստ	(5,456)	(13,280)
Ընդամենը տրամադրված փոխառություններ	261,959	273,168

Ընկերությունը նաև ստացել է կարճաժամկետ փոխառություն Ընկերության մասնակիցներից՝ 994,500 հազար ՀՀ դրամի (2023թ.՝ 896,000 հազար ՀՀ դրամի) չափով՝ ի ապահովում կարգավորող մարմնի կողմից համապատասխան կանոնակարգերով սահմանված պահանջների կատարման:

Առանցքային կառավարչական անձնակազմին փոխհատուցումներ

	2024	2023
	Հազար ՀՀ դրամ	Հազար ՀՀ դրամ
Ղեկավար անձնակազմի հատկացումներ	140,635	149,856
	140,635	149,856

Ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերությունների հետ գործարքներ և մնացորդներ

	2024	2023
	Հազար ՀՀ դրամ	Հազար ՀՀ դրամ
Ստացված ծառայություններ	183,278	191,946
	183,278	191,946

	31/12/2024	31/12/2023
	Հազար ՀՀ դրամ	Հազար ՀՀ դրամ
Մնացորդներ	14,994	16,563

19. Պայմանական պարտավորություններ և այլ գործառնական ռիսկեր

19.1 Պայմանական պարտավորություններ դատական հայցերի գծով

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև մինչև այս ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթիվը լնկերությունը ներգրավված չէ այնպիսի դատական վարույթներում, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ լնկերության ֆինանսական վիճակի վրա:

19.2 Ապահովագրություն

Լնկերությունը 30.06.2023թ.-ից առ այսօր ունի ապահովագրական ծածկույթ, որը ձեռք է բերել ֆինանսական պարտավորությունների կատարման երաշխավորման նպատակով՝ համապատասխանելով կարգավորող մարմինների կողմից սահմանված պահանջներին: Ապահովագրական միջոցները նպաստում են ֆինանսական ռիսկերի արդյունավետ կառավարմանը և ընկերության պարտավորությունների անվտանգ ու նպատակային կատարմանը՝ ապահովելով կարգավորող պահանջների լիարժեք կատարման անհրաժեշտ պայմանները:

19.3 Հարկային ռիսկեր

Հայաստանի հարկային մաքսային համակարգերը բնորոշվում են օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատավճիռների հաճախակի փոփոխություններով, որոնք հաճախ հստակ չեն, հակասական են և տարբեր կերպ են մեկնաբանվում տարբեր հարկային մարմինների կողմից: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն սահմանել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են այլ երկրների համեմատությամբ ավելի մեծ և էական հարկային ռիսկ առաջացնել: Ղեկավարությունը գտնում է, որ պատշաճ կերպով է գնահատել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի գործող հարկային օրենսդրության իր մեկնաբանությունների, պաշտոնական հայտարարությունների և դատավճիռների հիման վրա: Այնուամենայնիվ համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են լինել էական այս ֆինանսական հաշվետվությունների համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

19.4 Գնումների գծով պարտականություններ

2024թ. դեկտեմբերի 31-ի և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Լնկերությունը չունի գնումների գծով պայմանական պարտավորությունների:

19.5 Երաշխիքներ

Լնկերությունը 31 դեկտեմբեր 2024թ. դրությամբ ունի 60 մլն. ՀՀ դրամի երաշխիք Հայաստանյան բանկերի հետ (2023թ.՝ 60,000 հազար ՀՀ դրամի):

20. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր

20.1. Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Ընկերության ֆունկցիոնալ արժույթը Հայաստանի Հանրապետության ազգային արժույթն է՝ Դրամը: Այն հանդիսանում է նաև Ընկերության այս ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը՝ հազարների ճշտությամբ:

20.2. Հասույթ

Կատարողական պարտականություն և հասույթի ճանաչման պահեր

Հաճախորդների կողմից /Օգտվող/ կումիսիոն վճարների տեսքով եկամուտը ճանաչվում է գծային մեթոդով՝ ծառայությունները մատուցելու ժամանակ, երբ հաճախորդը միաժամանակ ստանում և օգտագործում է Ընկերության գործունեության արդյունքում առաջացած օգուտները:

Այն կումիսիոն վճարները, որոնք ընկերությունը ստանում է օպերատորներից եկամուտները ճանաչվում են ընթացիկ ամսվա վերջին օրվա դրությամբ, երբ Ընկերությունը փոխհաշվարկներ է կատարում է գործընկերոջ հետ: Ստացված կամ ստացման ենթակա կումիսիոն եկամուտներն իրենցից ներկայացնում են գործարքի գին այն ծառայությունների համար, որոնք սահմանված են որպես առանձին կատարման պարտականություններ: Այդ եկամուտը ներառում է հաճախորդի անունից արտարժույթի վաճառքի կամ գնման և վճարային գործարքների կատարման վճարներ:

Գործարքի գնի որոշում և գնի բաշխում կատարողական պարտականությունների վրա

Ընկերության հասույթները ստացվում են ֆիքսված գների պայմանագրերից և, հետևաբար, յուրաքանչյուր պայմանագրից ստացված հասույթի գումարը որոշվում է այդ ֆիքսված գներով:

20.3. Գործարքներ արտարժույթով

Ֆունկցիոնալ արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի հանրապետության Կենտրոնական բանկի կողմից հրապարակված փոխարժեքով:

Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները եւ պարտավորությունները վերագնահատվում են հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ որոշվող դրույքաչափերով: Չմարված դրամային ակտիվների եւ պարտավորությունների վերագնահատման արդյունքում առաջացող փոխարժեքային տարբերությունները անմիջապես ճանաչվում են շահույթում կամ վնասում:

20.4. Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները սկզբնապես ճանաչվում են սկզբնական արժեքով, իսկ հետագայում չափվում են ինքնարժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Ընկերությունը հիմնական միջոցների գծով ֆինանսական հաշվետվությունները կազմելու համար սահմանում է դրան օգտակար ծառայության ներքոհիշյալ ժամկետները, հետևաբար կատարում է մաշվող ակտիվի մաշվածության գումարի պարբերական բաշխում այդ ընթացքում:

Հիմնական միջոցներ	Օգտակար ծառայության ժամկետ
Շենքեր	20 տարի
Վարձակալված գույքի բարելավումներ	մինչև 20 տարի
Վճարահաշվարկային և կանխիկ տրամադրող տերմինալներ	8 -10 տարի
Ավտոմեքենաներ	5-10 տարի
Համակարգչային տեխնիկա	3-5 տարի
Այլ հիմնական միջոցներ	1-10 տարի

20.5. Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Ընկերության կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ոչ նյութական ակտիվի ամորտիզացիոն ժամկետը Ընկերությունը սահմանում է դրանց հնարավոր օգտագործման ժամկետների վերաբերյալ պատասխանատու ստորաբաժանման կողմից էլեկտրոնային տարբերակով տրված եզրահանգման հիման վրա: Օգտագործման ժամկետի որոշման անհնարինության դեպքում ոչ նյութական ակտիվի ամորտիզացիոն նվազագույն ժամկետը կազմակերպության կողմից սահմանվում է 10 տարի:

20.6. Ֆինանսական գործիքներ

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Ընկերությունը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության սկզբնական չափումը տեղի է ունենում իրական արժեքով: Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների խմբում չդասակարգված ֆինանսական ակտիվների կամ պարտավորությունների դեպքում իրական արժեքին գումարվում (կամ հանվում) են գործարքի հետ կապված ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը: Գործարքի գծով ծախսերը, որոնք ուղղակիորեն վերագրելի են «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների ձեռքբերմանը, անմիջապես ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները դասակարգվում են հետևյալ կատեգորիաների՝

- ա) «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվներ (ԻԱՇԿՎ),
- բ) «իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվներ (ԻԱԱՀՖԱ),
- գ) ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ:

Դասակարգումը կախված է ֆինանսական ակտիվներից առաջացող դրամական հոսքերի բնույթից և այն բիզնես մոդելից, որի ներքո պահվում և կառավարվում է այդ ակտիվը և որոշվում է սկզբնական ճանաչման պահին:

ա) «Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող».

Ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» այն դեպքում, երբ այն չի դասակարգվում որպես ամորտիզացված արժեքով չափվող (ինչպես նկարագրված է ստորև) և ոչ էլ որպես ԻԱԱՀՖԱ չափվող (ինչպես նկարագրված է ստորև): Բացի այդ, սկզբնական ճանաչման ժամանակ Ընկերությունը կարող է անշրջելիորեն նախորոշել որպես ԻԱՇԿՎ չափվող ցանկացած ֆինանսական ակտիվ, որը բավարարում է ամորտիզացված արժեքով չափվելու կամ ԻԱԱՀՖԱ չափվելու համար ներկայացվող պահանջները, եթե այդպես անելը վերացնում կամ նշանակալիորեն նվազեցնում է հաշվապահական անհամապատասխանությունը, որն այլապես կարող էր առաջանալ:

բ) «իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող» (ԻԱԱՀՖԱ)

Ֆինանսական ակտիվը դասակարգվում է որպես «իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող» (ԻԱԱՀՖԱ), եթե

- այն պահվում է այնպիսի բիզնես մոդելի ներքո, որի նպատակն ապահովվում է ինչպես պայմանագրային դրամական հոսքերը հավաքելով, այնպես էլ ֆինանսական ակտիվները վաճառելով, և
- սկզբնական ճանաչման պահին այն կազմում է Ընկերության կողմից համատեղ կառավարվող որոշակի ֆինանսական գործիքների պորտֆելի մաս և ունի կարճաժամկետ կտրվածքով շահույթի ստացման իրատեսական հնարավորություն, կամ
- դրա պայմանագրային պայմանները սահմանված ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի նկատմամբ տոկոսների վճարումներ են:

գ) «ամորտիզացված արժեքով չափվող»

Ֆինանսական ակտիվը դասակարգվում է որպես «ամորտիզացված արժեքով չափվող», եթե այն բավարարում է հետևյալ երկու պայմաններին և նախորոշված չէ որպես ԻԱՀԿՎ չափվող՝

- այն պահվում է այնպիսի բիզնես մոդելի ներքո, որի նպատակն է պահել ակտիվները պայմանագրային դրամական հոսքերը հավաքելու համար, և
- դրա պայմանագրային պայմանները սահմանված ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի նկատմամբ տոկոսների վճարումներ են:

Ընկերության ֆինանսական ակտիվները, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, ներառում են առևտրային դեբիտորական պարտքեր, բանկային ավանդները, դրամական միջոցները եւ դրանց համարժեքները, ինչպես նաև այլ ֆինանսական ակտիվները: Դրամական միջոցները եւ դրանց համարժեքները ներառում են դրամական միջոցները և ցլպահանջ ավանդներ բանկերում:

Ֆինանսական պարտավորություններ

Ընկերության ֆինանսական պարտավորությունները ներառվում են վարկերը և փոխառությունները և առևտրային կրեդիտորական պարտքերը:

Ընկերությունն իր ֆինանսական պարտավորությունները դասակարգում է որպես «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» կամ «ամորտիզացված արժեքով չափվող»՝ կախված պարտավորության ստանձնման նպատակից:

Ընկերությունը չունի «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» որևէ ֆինանսական պարտավորություն:

Ստորև ներկայացված է Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությունը որպես «ամորտիզացված արժեքով չափվող» դասակարգված ֆինանսական պարտավորությունների համար:

Վարկերը և փոխառությունները սկզբնապես ճանաչում են իրական արժեքով՝ առանց գործարքային ծախսերի: Սկզբնական ճանաչումից հետո վարկերը և փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով, իսկ այս արժեքի և մարման արժեքի միջև տարբերությունը փոխառության ժամկետի ընթացքում ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով: Տոկոսավճարները և փոխառությունների հետ կապված այլ ծախսերը ծախսագրվում են կատարմանը զուգահեռ՝ որպես ֆինանսական ծախսերի մի մաս, բացի որակավորվող ակտիվի ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանն ուղղակիորեն վերագրվող փոխառության ծախսումներից, որոնք կապիտալացվում են որպես այդ ակտիվի արժեքի մաս:

Առևտրային կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացիոն արժեքով:

20.7. Արժեզրկում

Ընկերության հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ, որոշելու՝ արդյոք առկա՞ է որևէ հայտանիշ, ըստ որի ակտիվը կարող է արժեզրկված լինել: Եթե որևէ այդպիսի հայտանիշ առկա է, ապա գնահատվում են այդ ակտիվի (կամ ակտիվների խմբի) փոխհատուցվող գումարները և համեմատվում հաշվեկշռային արժեքի հետ: Եթե գնահատված փոխհատուցվող գումարը փոքր է, ապա հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև գնահատված փոխհատուցվող գումարը, և արժեզրկումից կորուստները ճանաչվում են անմիջապես շահույթում կամ վնասում:

20.8. Պահուստներ

Պահուստը ճանաչվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ Ընկերությունն ունի իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և եթե հավանական է, որ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե դրա ազդեցությունը զգալի է, ապա պահուստը որոշվում է ապագա դրամական արտահոսքերի գեղչման միջոցով՝ օգտագործելով մինչև հարկումը տոկոսադրույքը, որն արտացոլում է դրամի ժամանակային արժեքի վերաբերյալ շուկայի ընթացիկ գնահատումները և կիրառելիության դեպքում պարտավորությանը վերագրվող յուրահատուկ ռիսկերը:

20.9. Հետաձգված հարկեր

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները ճանաչվում են, երբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և դրանց համապատասխան հարկային բազաների միջև առկա են տարբերություններ:

Հետաձգված հարկային ակտիվների ճանաչումը սահմանափակվում է այն դեպքում, երբ հավանական է, որ կառաջանա հարկվող շահույթ, որի դիմաց ժամանակավոր տարբերությունները հնարավոր կլինի օգտագործել:

Հետաձգված հարկային ակտիվները կամ պարտավորությունները չափում են՝ կիրառելով հարկային դրույքաչափերը, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ, և ակնկալվում է, որ կկիրառվեն, երբ հետաձգված հարկային պարտավորությունները/ (ակտիվները) կմարվեն/(կփոխհատուցվեն):

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, եթե կա ընթացիկ հարկային ակտիվներն ու պարտավորությունները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, և հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները վերաբերում են հարկերին, որոնք գանձվում են նույն հարկային մարմնի կողմից:

«Իզի Փեյ» ՍՊԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

Հավելված Ա – ՖՀՄՍ 13 Իրական արժեքի չափման բացահայտումներ

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է այն ակտիվները և պարտավորությունները, որոնց իրական արժեքները բացահայտվել են ծանոթագրություններում.

Հոդված	Իրական արժեք հազ. դրամ	Գնահատման մեթոդ	Իրական արժեքի հիերարխիայի մակարդակ	Նշանակալի ոչ դիտարկելի ելակետային տվյալներ
Փոխառություններ	281,168	<i>Ընթացիկ</i> Ցպահանջ փոխառությունների հաշվեկշռային արժեքը մոտ է իրական արժեքին	Մակարդակ 3	Կիրառելի չէ
Առևտրային դեբիտորական պարտքեր	735,140	<i>Ընթացիկ</i> Կարճաժամկետ (12 ամսից պակաս) դեբիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը մոտ է իրական արժեքին	Մակարդակ 3	Կիրառելի չէ
Առևտրային կրեդիտորական պարտքեր	6,624,920	<i>Ընթացիկ</i> Կարճաժամկետ (12 ամսից պակաս) կրեդիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը մոտ է իրական արժեքին	Մակարդակ 3	Կիրառելի չէ